

ԷԴՎԱՐԴ ԶՐԲԱՇՅԱՆ. Պուշկինը և հայ բանաստեղծները: «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1999, 245 էջ:

Ընթացիկ տարում նշվում է ոուս աղ-
գային մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի
ծննդյան 200-ամյակը: Այդ տարեթվի հետ է
կապվում ակադեմիկոս էդ. Զրբաշյանի
«Պուշկինը և Հայ բանաստեղծները» մենագ-
րությունը, որը լույս է տեսել Հայաստանի
գիտությունների ակադեմիայի հրատարա-
կությունում: Հետազոտության նյութը սահ-
մանվում է մենագրության բուն վերնա-
դրով, իսկ նախաբանում նշվում է, որ
«Պուշկինը և Հայաստանը» լայնածավալ
թեմայից հեղինակին հետաքրքրել է ամե-
նից առաջ Հայ բանաստեղծների կողմից
Պուշկինի պոեզիայի ընկալման ընդլայն ու
ստեղծագործական արդյունքները (խոսքը
վերաբերում է միայն արևելահայ դրակա-
նությունը): Այդ տեսանկյունից հեղինակը
անդրադառնում է մոտ 20 Հայ բանաստեղծ-
ների գրական ժառանգության «պուշկին-
յան շերտերի»:

Այս գիրքը միանգամից չի ստեղծվել:
Նրա մեջ լուսարանված առանձին հարցեր
վաղուց են զբաղեցրել հեղինակին: Այսպես,
«Պուշկինը և Թումանյանը» թեմային էդ.
Զրբաշյանը անդրադարձել է դեռ կես դար
առաջ՝ սկսած ուսանողական տարիներից,
իսկ Պուշկինի հետ Չարենցի և Տերյանի
ստեղծագործական կապերի մասին հոդված-
ներ է դրել 1970–80-ական թթ.: Սակայն
նախորդ հրատարակումները անփոփոխ
տեսքով չեն մտել ներկա մենագրության
մեջ. դրանք լրացվել, վերամշակվել են նո-
րահայտ գրական փաստերի ու տեսական
ըմբռնումների հաշվառումով և մտել են
գրքի մեջ որպես ամբողջական դիտական
աշխատության մասեր: Վերջապես, գրքի
բազմազան և շատ հարուստ նյութը լուսա-
բանված է գիտական նոր Հայացքներով ու
դրույթներով: Մի խոսքով, ամեն ինչից ե-
րևում է, որ այս աշխատությունը ստեղծվել
է Հատկապես XX դարի վերջին, որ դա, ոչ
թե պուշկինյան հոբելյանին Հասցեագրեն
հարմարեցված մի գործ է, այլ հեղինակի եր-

կարամյա գիտական հետաքրքրությունների
արգասիք:

Աշխատության մեջ գրական պատմա-
կան նյութը վերլուծվում է ժամանակագրա-
կան կարգով: Հեղինակը մեզ ծանոթացնում
է Հայ դրականության մեջ Պուշկինի ազդե-
ցության և թարգմանությունների բոլոր
հիմնական փաստերի հետ սկսած XIX դարի
30-ական թթ.: Այդ տեսանկյունից ընթերցո-
ղի Հայացքի առջև գծագրվում է արևելա-
Հայ և խորհրդահայ դրականության շուրջ
մեկուկեսդարյա ուղին: Այս ճանապարհով
բացահայտվում է ոչ միայն առանձին բա-
նաստեղծների վերաբերմունքը դեպի Պուշ-
կինը, այլև Հայ գրականության տարբեր
դարաշրջաններում Պուշկինի ընկալման
յուրահատկությունները:

Էդ. Զրբաշյանի աշխատության ամե-
նաբնորոշ գծերից մեկը փաստական նյութի
հարստությունն է: Տարբեր աղբյուրներից՝
Հայկական պարբերական մամուլից, քննա-
դատական հոդվածներից, նամակագրու-
թյունից և հուշագրությունից և, վերջապես,
որն ամենակարևորն է, բանաստեղծների գե-
ղարվեստական գործերից հեղինակը քա-
ղում է այն, ինչ կապվում է Պուշկինի ան-
վան հետ: Էդ. Զրբաշյանի համար «փոքր»
փաստեր չկան. նա կարողանում է «խոսեց-
նել» նույնիսկ առերևույթ աննշան թվացող
մանրամասները: Այսպես, բանտից եղբորը
գրած նամակներից մեկում Մ. Նալբանդյա-
նի ակնարկը Պուշկինի և սեմինարիստների
մասին հիմք է տալիս գիտնականին Հաս-
տատելու, թե Հայ հրատարակատեսուր ինչ-
քան լավ գիտեր Պուշկինի պոեզիան, որ
կարող էր հիշողությամբ վերականգնել նրա
չափածո վեպի այս ոչ էական թվացող ման-
րամասը:

Ինչպես ցույց է տրվում մենագրու-
թյան մեջ, Պուշկինի ազդեցությունը Հայ
բանաստեղծների վրա եղել է բազմաչերտ և
բազմակողմանի: Երբեմն հեղինակները ուղ-
ղակի մատնանշել են այդ ազդեցությունը

(օրինակ, Մ. Նալբանդյանի «Բանաստեղծ» ոտանավորը, որը ենթադրվում է «Նմանություն» բայց Պուշկինի նույնանուն բանաստեղծության համեմատությամբ զարգացնում է ինքնատիպ Հայացքներ արվեստագետի հասարակական կոչման մասին): Ստեղծվել են նաև Ա.Ա. Պուշկինի օրինակով ոգեշնչված որոշ երկեր (օրինակ, Ս. Շահազիզի «Լևոնի վիշաք» և Ղ. Հովհաննիսյանի «Հակոբ Դուրյան» պոեմները իրենց բուն մտահղացմամբ և կառուցվածքի որոշ կողմերով ելակետ են ունեցել «Եվգենի Օնեգին» չափածո վեպը): Հայ բանաստեղծները գիմել են պուշկինյան տողերին, վերցնելով դրանք իբրև բնաբան (Ս. Շահազիզ, Ե. Չարենց և ուրիշներ), օգտագործելով առանձին մոտիվներ և պատկերներ (այստեղ օրինակները հատկապես շատ են՝ Ս. Շահազիզ, Ա. Ծատուրյան, Ղ. Թումանյան, Վ. Տերյան, Ե. Չարենց և ուրիշներ): Շատ Հետաքրքիր են այն գիտողությունները, որոնք վերաբերում են այսօր գրեթե մոռացված մի բանաստեղծի՝ Լևոն Մանվելյանի գրամատուրգիայի մեջ պուշկինյան փոքր ողբերգությունների ժանրային ձևի օգտագործմանը, կամ այն, որ Լևոն Շանթի «Լեռան աղջիկը» պոեմում կիրառված է այնպիսի մի հազվագեղ և դժվարին տաղաչափական ձև, որպիսին «օնեգինյան տունն» է իր կառուցվածքով ու հանգավորման համակարգով: Իսկ երբեմն Պուշկինի հետ կապվում են Հայ գրողների ստեղծագործական ամբողջական շերտեր, ինչպես, օրինակ, Ե. Չարենցի վերջին տասնամյակի պոեզիան: Մի խոսքով, էգ. Ջրբաշյանի մենագրությունը որոշ իմաստով դառնում է Ե. Չարենցի հետևյալ ասույթի համակողմանի գիտական վերլուծությունն ու հիմնավորումը. «Ինչ վերաբերում է Պուշկինի գերին, մասնավորապես Հայ պոեզիայում, ապա այդ թեման անսպառ է: XIX դարից սկսած մինչև մեր օրերը չկա և ոչ մի Հայ բանաստեղծ, որ այս կամ այն կերպ դաստիարակված չլիներ Պուշկինով և որի ստեղծագործության մեջ արտահայտված չլինի մեծ բանաստեղծի ազդեցությունը»:

Նշենք նաև, որ ելնելով տարբեր բանաստեղծների առանձնահատկություններից, հետազոտողը աշխատում է բացահայտել ու մեկնաբանել այն ամենից էականը, որով տվյալ հեղինակը կապվում է պուշկինյան

յան ավանդույթների հետ: Բնորոշ են այս առումով մենագրության երկու ելակետային գլուխները՝ նվիրված Հովհ. Թումանյանի ու Ե. Չարենցի ստեղծագործությանը: Դրանցից առաջինի մեջ Պուշկինի և Թումանյանի պոեզիան համադրվում է տիպաբանական ընդհանրության սկզբունքով: Թումանյանը գիտվում է իբրև մի երևույթ, որին Հայ գրականության մեջ շատ կողմերով վիճակվեց կատարելու այն դերը, որ Ռուսաստանում կատարել է Պուշկինը: Այդ ընդհանրությունը երևան է եկել նախ և առաջ ազգային ոգու և Հայացքի, գրական ըմբռնումների, դեպի ժողովրդական բանահյուսությունը ունեցած վերաբերմունքի, ինչպես նաև գեղարվեստական ոճի որոշ կողմերի ընդհանրությամբ: Ահա թե ինչու Պուշկին-Թումանյան գուգահեռ ամուր կերպով մտել է Հայ գրականագիտության մեջ: Այդ գուգահեռը, ինչպես բազմիցս զգուշացնում է գրականագետը, ոչ թե ազդեցության հետևանք է, այլ ուղղակի բխում է ազգային ժողովրդական բանաստեղծի գրական-պատմական մեծ առաքելությունից, որը ուս գրականության մեջ բաժին ընկավ Պուշկինին, իսկ Հայ գրականության մեջ՝ Թումանյանին (էջ 121): Շատ կարևոր նշանակություն տալով այս Հարցին, հեղինակը ամենայն բախնդրությամբ աշխատում է պարզել, թե ինչպես է ծագել այդ գուգահեռը: Այստեղ հատկապես ընդգծվում է Վահան Տերյանի, Յուլի Խանգաղյանի և Ստեփան Ջրբաշյանի խաղաղաձ դերը այդ դրույթի հիմնավորման գործում:

Ե. Չարենցին նվիրված գլխում ցույց է տրվում Հայ բանաստեղծի վերաբերմունքի զարգացումը՝ Պուշկինին մերժելուց մինչև նրա յուրօրինակ պաշտամունքը: Ընդամեն, պուշկինյան ավանդույթների յուրացումը տարբեր ձևերով ու նպատակներով է երևան գալիս «Էպիկական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» ժողովածուներում և կյանքի վերջին տարիներին (1934-37թթ.) գրված բանաստեղծություններում:

Ինչպես այս հանգուցային գլուխներում, այնպես էլ մենագրության մեջ ընդհանրապես պուշկինյան թեման լուսաբանվում է Հայ գրականության առաջնության զարգացման առնչությամբ: Հիշենք, օրինակ, Հայ գրականության ժողովրդայնության և ռեալիզմի մասին հեղինակի դատողությունները:

դուլթյունները (Թումանյանին վերաբերող գլուխը) կամ Ջարենցի պոեզիայում դրական անունների հերոսների առատության մատնանշումը: Աշխատության առաջին գլխում («Մատուցներում») ցույց է տրվում, որ Պուշկինի մուտքը մեզանում համընկավ Հայ նոր դրականության ձևավորման շրջանի հետ և դա իր կնիքը դրեց նրա ընկալման վրա: Բնորոշ է, որ Պուշկինի հայերեն առաջին թարգմանությունները գրաբար էին, որովհետև աշխարհաբար լեզուն դրա համար ձևավորված չէր: Կամ՝ «Ոսկի ձկնիկ» հեքիաթի Ռ. Պատկանյանի կատարած թարգմանությունը, որն, ի դեպ, շատ հաջող կողմեր ունի և մոռացություն է մատնվել անիրավացիորեն, առիթ տվեց Հայտնի մանկավարժ և գրական գործիչ Սեդրակ Մանդինյանին հատուկ խոսելու մեր ազգային բանահյուսական գանձերը և հատկապես «Սասունցի Դավիթ» էպոսը գեղարվեստորեն մշակելու անհրաժեշտության մասին: Այս և նման բազմաթիվ «չեղումները» հիմնական թեմայից դառնում են էդ. Ջրբաշյանի գրքի ներքին, խորքային գիտական շերտը, և շատ են հարստացնում այն: Այստեղ խաչաձևվում են հեղինակի բազմազան գիտելիքներն ու գիտական հետաքրքրությունները գրականագիտության տարբեր բնագավառներում՝ դրականության պատմություն և տեսություն, դրական փոխառնչություններ, բանաստեղծական թարգմանության հարցեր:

Առանձնացնելով խոսքը թարգմանությունների վերաբերյալ, կուզեինք խոսել Ալ. Մատուրյանի մասին, որը իբրև ուսուցիչի թարգմանիչ դեռևս ըստ արժանավունյի չի գնահատվել: Նրա պուշկինյան թարգմանությունները և հոգվածները, ինչպես ցույց է տվել էդ. Ջրբաշյանը, զգալիորեն ընդլայնեցին Հայ ընթերցողի՝ ուսուցանաստեղծի ընկալման շրջանակները: Հետաքրքիր է նաև այն դիտողությունը, ըստ որի Ա. Խնկոյանի պուշկինյան հեքիաթների թարգմանությունը համեմատվում է Սամուիլ Մարչակի թարգմանչական սկզբունքների հետ (բերված քաղվածքները համոզում են այս կարծիքի ճշմարտացիության մեջ): Հաճախ գրականագետը համեմատում է միևնույն բանաստեղծական տեքստի տարբեր թարգմանությունները, ներկայացնում է որոշ երկերի թարգմանության պատ-

մուլթյունը («Ոսկե ձկնիկ» հեքիաթը, «Եվդենի Օնեգին»-ը, «Հուշարձանը» և այլն): «Հուշարձանի» թարգմանություններին նվիրված է աշխատության առանձին, եզրափակիչ գլուխը: Ի դեպ, այստեղ հեղինակը ընթերցողին հաճելի անակնկալ է մատուցում. նա հանդես է դալիս ոչ միայն գիտնական-քննադատի դերում, որը մանրակրկիտ վերլուծում է նշանավոր բանաստեղծության բոլոր հայերեն թարգմանությունները, այլև իբրև թարգմանիչ ներկայացնում «Հուշարձանի» իր թարգմանությունը: Էդ. Ջրբաշյանը վերստեղծել է բնագրի և՛ պատկերային, և՛ հնչերանգային ու ռիթմական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները: Ընդամիս, նա չի պատճենում բնագրի տաղաչափական նկարագիրը և բազմիցս տարբեր առիթներով զգուշացնում է դրանից: Բնագրի վեցոտնյա յամբական տողի փոխարեն նա ընտրել է 14-վանկանի քառանգամ (4+3+4+3) վանկային ոտանավոր (կուզեինք միայն, որ թարգմանության մեջ չլինեին թույլ հնչող այնպիսի հանդեր, ինչպես «կըղի - վայրի», «սիրելի - երգեցի»):

Բուն թարգմանության հարցերին նվիրված էջերի կապակցությամբ նշենք հետևյալը: Գրքի առաջաբանում հեղինակը վերապահություն է անում, որ իրեն հետաքրքրում են հիմնականում պուշկինյան պոեզիայի հայերեն թարգմանությունների տաղաչափության հարցերը: Ասենք, որ Հայկական տաղաչափության բնույթի և առանձնահատկությունների խնդիրները գիտնականին զբաղեցրել են երկար տարիներ: Համեմատաբար վերջերս նա հատուկ մենագրություն հրատարակեց Վահան Տերյանի տաղաչափական արվեստի մասին: Իսկ Պուշկինի հայերեն թարգմանությունների կապակցությամբ էդ. Ջրբաշյանին ղլխավորապես հետաքրքրում է այն հարցը, թե բնագրերի ռիթմական գծագիրը Հայկական ոտանավորի ո՞ր չափերով կարող է ավելի ճիշտ վերստեղծվել: Առանձին դեպքերում նա մանրամասն բնութագրում է Հայերեն թարգմանությունների չափն ու ռիթմը, տողի երկարությունը և ներքին կառուցվածքը, հանգրի բնույթը: Եվ պետք է ասել, որ գրքի եզրահանդուսներն ունեն ոչ միայն գիտական, այլև գործնական արժեք՝ կարող են մեծապես օգնել Պուշկինի ապագա

Թարգմանիչներին: Ափսոսում ենք միայն, որ էգ. Ջրբաշյանը մնում է Հիմնականում տաղաչափության հարցերի շրջանակներում և Հազվադեպ է անդադառնում այնպիսի խնդիրներ, ինչպիսին է պատկերավորության, երաժշտականության, ներդաշնակության և պուլկինյան պոեզիայի մյուս առանձնահատկությունների վերարտադրությունը: Այնինչ Հեղինակի առանձին դիտողությունները (ասենք, Ալ. Ծատուրյանի Թարգմանությունների բառապաշարի քննությունը մենագրության 73-74 էջերում) ցույց են տալիս, որ նա ունի ոճի նուրբ զգացողություն, և Թարգմանությունների վերլուծությունը այդ տեսանկյունից կարող էր լինել ավելի ամբողջական: Բայց դա, ինչպես երևում է, չի մտել Հեղինակի խնդիրների շարքը...

Մենագրության մեջ տարբեր առիթներով քննվում են նաև Պուլկինի մասին Հայ գրողների, քննադատների և դրական գործիչների կարծիքները, թեև այդ հարցը, ինչպես զգուշացնում է Հեղինակը նախաբանում, իր ամբողջությամբ մենագրության Հիմնական նպատակներից դուրս է եղել: Սակայն Պուլկինի մասին Հայ դրական գործիչների ասույթներն, ի վերջո, գծագրում են մի Հարուստ և տպավորիչ պատկեր: Ընթերցողը գրքից կծանոթանա Ալ. Ծատուրյանի պուլկինյան Հոդվածներին, Հովհ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի, Ն. Ջարյանի ինքնատիպ ասույթներին: Հիշենք միայն Դ. Դեմիրճյանի հետևյալ խոսքերը. « Պուլկինն ազդել է ավելի շատ, քան երևում է, քան մեր Հեղինակները խոստովանում են, քան, վերջապես, թարգմանել են»: Կամ՝ «...Հենց որ սկսում է որևէ ժողովուրդ գարթնել Հայացքն ուղղում է դեպի Պուլկինը» (էջ 188-189):

Գիտնականը չի շրջանցում նաև Հայ քննադատների՝ Ա. Չոպանյանի, Ստ. Լիսիցյանի, Հովհ. Գնունու (Շահնազարյան) Հոդվածները: Վերջինիս Հակապուլկինյան ելույթները անցյալ դարի 90-ական թթ. և այդ առիթով Հայկական մամուլում ծագած բանավեճի քննությունը պատկանում է մենագրության ամենահետաքրքիր էջերի

թվին: Խոսելով վերջին տասնամյակներում Հայ պուլկինագետների ձեռքբերումների մասին՝ Հեղինակը առանձնացնում է Սյուզան Գուլլակյանի Հոդվածը՝ «Հայկական մոտիվը Պուլկինի «Թագիտ» պոեմում»: Չէ՞ որ Հենց այդ պոեմի չարաբաստիկ մի տող՝ "Ты трыц, тры паб, тры армяну" («Դու վախկոտ ես, դու ստրուկ ես, դու Հայ ես») բազմիցս պատճառ է դարձել, որ մեզանում խոսվի Պուլկինի ինչ-որ «Հակահայկական տրամադրությունների» մասին: Վերջին տարիներս շատ Հոլովվեց այդ տողը նաև նորաթուխ Հայ «Հայրենասերների» շուրթերում, որոնք փորձեցին նույնիսկ քանդել Պուլկինի երևանյան Հուշարձանը: Հանգուցյալ գրականագետը ժամանակին Համոզիչ կերպով ցույց է տվել այդ տողի բուն իմաստը: Եվ լավ է, որ էգ. Ջրբաշյանը նորից անդադառնում է այդ հարցերին և լրացուցիչ փաստարկներով Հաստատում է այն միտքը, որ պուլկինյան պոեմում Հայերի Համար վիրավորական ոչինչ չկա, քանի որ Թագիտի Հայրը նրան «Հայ» է անվանում բարություն, խղճահարություն, արյուն թափել չուզենալու Համար:

Գրախոսվող գրքում դրական Հայտնի անունների կողքին Հիշատակվում են նաև այսօր մոռացված դեմքեր, որոնք տարբեր առիթներով թարգմանել են Պուլկինին, նվիրել են նրան բանաստեղծություններ ու Հոդվածներ: Հանելով այդ մարդկանց մոռացության փոշուց՝ էգ. Ջրբաշյանը դեկավարվել է ոչ միայն գիտական բարեխղճությամբ, այլև մարդկային արդարամտության զգացումով, քանի որ սերունդներին չի կարող չհետաքրքրել այն, թե ո՞վ ինչ է արել Հայ պուլկինականի բնագավառում:

Հայ պուլկինագիտության պատմությունը ավելի քան 100-ամյա ուղի է անցել: Առանց կասկածելու այսօր արդեն կարելի է ասել, որ ինչքան էլ շարունակվի ապագայում այդ պատմությունը, էզվարդ Ջրբաշյանի «Պուլկինը և Հայ բանաստեղծները» մենագրությունը չի կորցնի իր գիտական արժեքը և պատվավոր տեղ կգրավի այդ պատմության մեջ:

Մ. Գ. ԶԱՆՓՈՒԱԴՅԱՆ